# Գիտական աշխատանքը պետք է դարձնել գրավիչ

## Ասում է ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը

**Օֆելյա ԿԱՄԱՎՈՍՅԱՆ**

Գիտության ոլորտի բարեփոխումներն իրականացնելու համար լուրջ ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ, այդ թվում եւ վարկային, ինչպիսիք տրամադրվում են կրթական բարեփոխումներին: Նման կարծիք հայտնեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ **Ռադիկ Մարտիրոսյանը** երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ՝ նշելով, որ միջոցներ են պետք մասնավորապես քիմիայի երեք ինստիտուտները մեկում միավորելու համար:

Արձագանքելով ԳԱԱ տարեկան հաշվետվության օրը նախագահ **Սերժ Սարգսյանի** այն դիտարկմանը, թե կառավարությունը «սոցապ նախարարություն» չէ, նա ասաց, որ գիտությունը պետք է մշտապես լինի պետության ուշադրության կենտրոնում: Նա նաեւ տեղին է համարում նախագահի հնչեցրած քննադատությունը, թե շատ են շնորհվում գիտական կոչումներ ու աստիճաններ: Ըստ ակադեմիկոսի, անցած տարի պաշտպանված շուրջ 600 թեկնածուական ատենախոսություններից 106-ը տնտեսագիտական թեմաներով են, ինչը բնավ անհրաժեշտ չէ, քանի որ *«մեր երկրում տնտեսությունը շատ զարգացած չէ»*: Ռ. Մարտիրոսյանը կարծում է, որ գիտությամբ զբաղվելու պատրվակով բանակից խուսափող տարեկան 220 հոգին մեծ թիվ չէ, հատկապես որ այլ տարբերակներով բանակից խուսափող երիտասարդների թիվն ավելի մեծ է:



ԳԱԱ նախագահը կրկին ներկայացրեց ցուցանիշներ, թե որքան մեծ գումարներ են հատկացվում գիտությանն արտերկրում. ԵՄ անդամ-երկրներում գիտությանը հատկացվում է միջինը ՀՆԱ-ի 1,84 տոկոսը, երկու միլիոն բնակչություն ունեցող Սլովենիայում՝ ՀՆԱ-ի 1,2 տոկոսը, իսկ մեր երկրում՝ 0,2 տոկոսը: Պետական բյուջեից ֆինանսավորվող հաստատություններում ամենացածրը գիտնականների աշխատավարձն է. ծառայողների միջին աշխատավարձը 54 հազար դրամ է, գիտնականներինը՝ 47 հազար դրամ: Մեր երկրում գիտության ու գիտնականի վարկանիշը բարձր չէ, խորհրդային տարիներին ընտանիքում գիտության թեկնածու ունենալը պարծանք էր, այսօր այդպես չէ: Այս ամենում ակադեմիկոսը տեսնում է նաեւ իրենց մեղքը՝ *«գիտական աշխատանքը պետք է գրավիչ դարձնել»*: Ի պատասխան լրագրողի հարցին՝ նա նշեց, որ խնդիրների մեջ առավել կարեւոր է ենթակառուցվածքների վերականգնումը, այլ ոչ թե գիտնականի աշխատավարձը:

Խոսելով ոլորտի օպտիմալացման անհրաժեշտության մասին՝ բանախոսն ասաց, որ այդ, ինչպես նաեւ գիտության ֆինանսավորման հարցերով ներկայում զբաղվում է գիտության պետական կոմիտեն: Բացի այդ, արդեն եղել է լուրջ օպտիմալացում. 1990-ականներին համակարգում աշխատում էր 7000 հոգի, իսկ այսօր՝ շուրջ 3700: Ռ. Մարտիրոսյանը համոզված է, որ սա նվազագույն թիվն է: